373 [Ներս. դպր.]
Կ-21

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

# ԹՈՇԱԿԱՐԿՂԻ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, № 12
1907

370
2002-ԿԱ

Իսկականի վրայ մակագրուած է.
«Հաստատեմք ի գործադրութիւն։
Մկրտիչ կաթողիկոս ամենայն Հայոց»։

373[Ներս. Դպ.]:
Կ-21

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ԹՈՇԱԿԱՐԿՂԻ*)

§ 1. Ներսիսեան Հոգևոր Դպրոցում հիմնւում է Թոշակարկղ՝ Դպրոցում ծառայողների և նրանց ընտանիքների ապահովութեան համար։

Ծան. Ծառայողներ կազմում են դպրոցի տեսուչը, ուսուցիչները, վերակացուները, բժիշկը, գրադարանապետը, Հոգաբարձութեան քարտուղարը, նրա օգնականը, գանձապահը, տնտեսական կառավարիչը և տեսչի քարտուղարը։

§ 2. Իւրաքանչիւր ծառայողի համար պարտաւորական է մասնակից լինել Թոշակարկղին։

§ 3. Թոշակարկղը տալիս է մասնակիցներին ա) կենսաթոշակներ. բ) միանուագ օժանդակութիւններ և գ) ծառայում է նրանց համար իբրև խնայողական գանձարան—այս Կանոնադրութեան ճիշտ հիման վրայ։

---

*) Ապագայում, եթէ Ս. Էջմիածնի Ճեմարանը և Հայոց Թեմական դպրոցներն էլ կամենան Թոշակարկղներ հիմնել և միանալ Ներսիսեան դպրոցի Թոշակարկղի հետ՝ ընդհանուր Թոշակարկղի կանոնադրութիւն մշակելու համար բանակցութիւններ կլինին։

52100
11 JUL 2013



§ 4. Կենսաթոշակ և միանուագ օժանդակութիւն Թոշակարկղը տալիս է իւր հաստատուելուց 10 տարի յետոյ, կամ աւելի էլ առաջ՝ եթէ նրա հիմնական դրամագլուխը հասնէ 70,000 րուբլու։ Իսկ հաստատուելու օրից սկսեալ ծառայում է իբրև խնայողական գանձարան։

## ԹՈՇԱԿԱՐԿՂԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 5. Թոշակարկղը ունի ա) հիմնական դրամագլուխ և բ) գործադրելի գումարներ։

§ 6. Թէ հիմնական դրամագլուխը և թէ գործադրելի գումարները ուրիշ ոչ մի գործադրութիւն չեն կարող ունենալ՝ բացի § 3-ում նշանակուած նպատակներից։

§ 7. Հիմնական դրամագլուխը կազմում են—

ա) Դպրոցի Հոգաբարձութեան յօգուտ Թոշակարկղի տալիք նպաստը, տարեկան 3000 րուբլի, 15 տարուայ ընթացքում։

Ծան. 1. Բացի այս նպաստից՝ դպրոցը ուրիշ ոչ մի դրամական նպաստ կամ պատասխանատուութիւն յանձն չէ առնում Թոշակարկղի վերաբերութեամբ։

Ծան. 2. Եթէ 15 տարուայ ընթացքում յատուկ նուէրներից այնպիսի դրամագլուխ գոյանայ, որ բաւականութիւն տայ այս Կանոնադրութեան § 4, § 13 ծան. և § 16 ծան. մէջ յիշուած պահանջներին՝ այս դէպքում Հոգաբարձութեան նպաստը՝ 15 տարին դեռ չլրացած, կդադարի։

բ) Մասնակիցների խնայողութիւնները 10 տարուայ ընթացքում (§ 13), բացի § 14-ում նշանակուած մասից։



գ) Հին ծառայողների մասնագինը (§§ 36, 38), բացի § 14-ում նշանակուած մասից։

դ) Նոր մասնակիցների միանուագ վճարները (§ 11), 10 տարուայ ընթացքում։

ե) Հաստատուելուց 10 տարի յետոյ գործադրելի գումարների այն մասը, որ կաւելանայ՝ Թոշակարկղի տարեկան պարտաւորութիւնները կատարելուց յետոյ։

զ) Յատուկ նուէրներ Թոշակարկղի անունով։

է) Վերոյիշեալ (§ 7, ա., բ., գ., դ., ե., զ.) գումարների տոկոսները 10 տարուայ ընթացքում (տես § 4)։

§ 8. Գործադրելի գումարները, որոնք գոյութիւն կունենան Թոշակարկղի հաստատուելուց 10 տարի յետոյ՝ (§ 4) կազմում են—

ա) Հիմնական դրամագլխի տարեկան տոկոսները.

բ) Մասնակիցների տարեկան խնայողութիւնները.

գ) Նոր մասնակիցների միանուագ վճարները։

§ 9. Թոշակարկղի բոլոր դրամական միջոցները կազմում են նրա անկապտելի սեփականութիւնը և շահեցնւում են ապահով արժէթղթերով կամ ապահով հիմնարկութիւնների մէջ, համաձայն Մասնաժողովի (§ 42) որոշման և Հոգաբարձութեան հաստատութեան։

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԸ

§ 10. Մասնակիցները երկու տեսակ վճարք են տալիս Թոշակարկղին—ա) միանուագ և բ) տարեկան։

§ 11. Միանուագ վճարքը տալիս են դպրոցում նոր ծառայութեան մտնողները (§ 1, ծան.), հաւասար իրանց ամսական ռոճկի կէսին, որ հանւում է նրանց ռոճկից կամ միանուագ, առաջին ամսում, կամ առաջին երեք ամիսներում, ըստ իրանց ցանկութեան։

Ծան. Թոշակարկղի հաստատուելու օրը դըպրոցում արդէն ծառայողները ազատւում են միանուագ վճարքից:

§ 12. Միանուագ վճարքն անվերադառնալի է:

§ 13. Տարեկան վճարքը, որ կոչւում է խնայողութիւն՝ տալիս են մասնակիցները բոլոր իրանց պաշտօնավարութեան ժամանակ դպրոցում, մինչև 25 տարի, և հաւասար է իրանց տարեկան ռոճկի 6 %-ին:

Ծան. Ապագայում, երբ հիմնական դրամագլուխը, նուէրներից կամ ուրիշ եկամուտներից, այնքան մեծանայ, որ բաւականութիւն տալով § 16, ծան. մէջ յիշուած կէտին, դարձեալ շարունակ մնացորդներ աւելանան գործադրելի գումարներից՝ խնայողութիւնները համապատասխան չափով կնուազին, մինչև 4 %:

§ 14. Եթէ մասնակիցը, թոշակ ստանալու իրաւունք դեռ ձեռք չբերած, թողնէ դպրոցի ծառայութիւնը՝ իրաւունք ունի վերցնելու իւր բոլոր խնայողութիւնը, առանց տոկոսի (§ 7, բ., գ.):

## ԹՈՇԱԿ ԵՒ ՆՐԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

§ 15. Թոշակը երեք կարգի է բաժանւում.—ա) լիակատար, բ) երկրորդ կարգի և գ) երրորդ կարգի:

§ 16. Լիակատար թոշակը ժամանակաւորապէս որոշւում է մասնակցի տարեկան ռոճիկների միջին թուի $^{3}/_{4}$-ին հաւասար:

Ծան. Երբ հիմնական դրամագլուխն այնքան մեծանայ, որ գործադրելի գումարներից շարունակ մնացորդներ աւելանան՝ այս դէպքում թոշակն հետզհետէ կհաւասարեցնուի միջին ռոճկին, նախ $^{7}/_{8}$-ին և ապա ամբողջին, և այս յաւելումները կտարածուին հաւասարապէս թէ հին և թէ նոր թոշակառուների վրայ:



§ 17. Երկրորդ կարգի թոշակը հաւասար լիակատարի $^{3}/_{5}$-ին:

§ 18. Երրորդ կարգի թոշակը հաւասար է լիակատարի $^{1}/_{3}$-ին:

(Օրինակ, 1000 րուբլի միջին ռոճկի համար, լիակատար՝ 750 ր., 2. կարգի 450 ր., 3. կարգի՝ 250 ր.):

§ 19. Լիակատար թոշակ տրւում է մասնակցին՝ 25 տարի պաշտօնավարութիւնից յետոյ:

§ 20. Երկրորդ կարգի թոշակ տրւում է մասնակցին՝ 20 տարի պաշտօնավարութիւնից յետոյ:

§ 21. Երրորդ կարգի թոշակ տրւում է մասնակցին՝ 15 տարի պաշտօնավարութիւնից յետոյ:

Ծան. 1. Մասնակցի պաշտօնի փոփոխութիւնը դպրոցում՝ արգելք չէ հանդիսանում թոշակ ստանալու. իւրաքանչիւր պաշտօնի տարիներն էլ հաշուի կառնուին, և թոշակը կտրուի՝ բոլոր պաշտօնների մէջ ստացած ռոճիկների միջինին համապատասխան:

Ծան. 2. Եթէ մասնակիցը պաշտօնը թողնէ դպրոցում և յետոյ նորից մտնէ ծառայութեան՝ նրա առաջին պաշտօնավարութեան տարիներն էլ հաշուի կառնուին, այն պայմանով, որ վերադարձնէ իւր վերցրած խնայողութիւնը (§ 14) բարդ 4 %-ով:

§ 22. Թոշակի իրաւունք ստացող մասնակիցը թոշակն ստանում է միայն այն ժամանակ՝ երբ ռոճկով պաշտօնը թողնէ դպրոցում:

§ 23. Թոշակի իրաւունք ստացող մասնակիցը թոշակն ստանում է մինչև իւր մահը:

§ 24. Եթէ թոշակառուն ընտանիքի (կնոջ և զա-

ւակների) տէր է՝ նրա մահից յետոյ, կամ նրա կուսակրօն հոգեւորական դառնալու կամ ստացուածքների իրաւունքից զրկուելու դէպքում (§ 24 բ, գ)՝ նրա ընտանիքը շարունակում է ստանալ թոշակ այն հաշուով, որ կինը ստանայ ամուսնու թոշակի կէսը, իսկ անչափահաս որդիքը՝ միւս կէսը, անկախ իրանց թուից։

§ 25. Եթէ թոշակառուն ընտանիքի տէր չէ, բայց ունի անապահով ծնող կամ ծնողներ, որոնք նրա հետ և նրա միջոցներով են ապրում՝ նրա մահից յետոյ, ինչպէս նաև նրա կուսակրօն հոգեւորական դառնալու կամ ստացուածքների իրաւունքից զրկուելու դէպքում՝ ծնողը կամ ծնողները ստանան նրա թոշակի կէսը, մինչև մահ։

Ծան. Միևնոյն պայմաններում նոյն թոշակը ստանան և ընտանիքաւոր թոշակառուի ծնողը կամ ծնողները՝ նրա ընտանիքի մահից յետոյ։

§ 26. Կինը ստանայ իրան հասանելիք թոշակի մասը՝ մինչև իւր մահը կամ նորից մարդու գնալը։

§ 27. Որդիքը ստանան իրանց հասանելիք թոշակի մասը՝ մինչև չափահաս (21 տարեկան) դառնալը։ Աղջիկները սրանից առաջ էլ կդադարին թոշակ ստանալ՝ եթէ մարդու գնան։

§ 28. Եթէ մասնակիցը դպրոցում պաշտօն վարած ժամանակ մեռնի, կամ անբուժելի հիւանդութիւն ստանայ, որի պատճառով զրկւում է աշխատելու ընդունակութիւնից՝ նրան կամ նրա ընտանիքին պատշաճաւոր թոշակը (§§ 24—27) կտրուի որոշուած ժամանակից (§§ 19, 20) հինգ տարի առաջ, այսինքն՝ երրորդ կարգի թոշակ՝ եթէ ծառայել է 10—14 տարի, երկրորդ կարգի թոշակ՝ եթէ ծառայել է 15—19 տարի, և լիակատար թոշակ՝ եթէ ծառայել է 20—24 տարի։

Ծան. Այսպիսի անբուժելի հիւանդութեան



մասին պատշաճաւոր վկայական պէտք է ներկայացնուի՝ Մասնաժողովի նշանակած բժշկական խորհրդից։ Այս վկայականը կներկայացնուի Հոգաբարձութեան, որ ըստ իւր հայեցողութեան որոշում է կայացնում։

§ 29. Եթէ մասնակիցը, լիակատար թոշակի իրաւունք ստանալուց յետոյ, շարունակէ պաշտօնավարութիւնը դպրոցում՝ դադարում է խնայողութիւն անելուց (§ 13). իսկ այնուհետև նրա ծառայած տարիների համար նախնական թոշակի վրայ յաւելում չէ լինում։

## ՄԻԱՆՈՒԱԳ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

§ 30. Եթէ մասնակիցը դպրոցում պաշտօն վարած ժամանակ մեռնի կամ անբուժելի հիւանդութիւն ստանայ (§ 28 և ծան.) իւր պաշտօնավարութեան 5—9 տարիներում՝ նորան կամ նրա ընտանիքին, բացի նրա բոլոր խնայողութիւնը առանց տոկոսի վերադարձնելուց (§ 14)՝ տրւում է միանուագ օժանդակութիւն, հաւասար նրա տարեկան ռոճիկների միջինին։

§ 31. Եթէ մասնակիցը դպրոցում պաշտօն վարած ժամանակ մեռնի կամ անբուժելի հիւանդութիւն ստանայ իր պաշտօնավարութեան առաջին չորս տարիներում՝ նորան կամ նրա ընտանիքին, բացի ամբողջ խնայողութիւնը առանց տոկոսի վերադարձնելուց՝ տրւում է միանուագ օժանդակութիւն, հաւասար նրա տարեկան ռոճիկների միջինի կէսին։

Ծան. §§ 30 և 31-ում նշանակուած միանուագ օժանդակութիւնները տրւում են այն դէպքում, եթէ գործադրելի գումարներից, այն տարուայ միւս պարտաւորութիւնները կատարելուց յետոյ, մնացորդ աւելանայ։

§ 32. Թոշակ ստացողը, թէ ինքը մասնակիցը լինի և թէ նրա ընտանիքը՝ իրաւունք չունի միանուագ օժանդակութիւն ստանալու։

§ 33. Թոշակի և միանուագ օժանդակութեան իրաւունքը չէ կարելի ոչ ծախել, ոչ գրաւ դնել և ոչ ուրիշ որևէ կերպով զիջանել ուրիշին։

§ 34. Թոշակ ստանալու իրաւունքը դադարում է—

ա) Թոշակ ստացողի մահով.

բ) Թոշակ ստացողի կուսակրօն հոգևորական դառնալով.

գ) Դատարանի վճռով՝ բոլոր ստացուածքների իրաւունքից զրկուելով.

դ) Կնոջ և աղջիկների մարդու գնալով.

ե) Բոլոր որդոց չափահաս դառնալով։

## ՄԱՍՆԱԳՆԻ ՎՃԱՐՈՒՄԸ

Ծան. Մասնագինը (ВКУПЪ) խնայողութեան այն գումարն է, որը Թոշակարկղի մասնակիցը պէտք է արած լինէր մինչև Թոշակարկղի հաստատութեան ժամանակ՝ եթէ իւր պաշտօնավարութեան սկզբից ևեթ գոյութիւն ունեցած լինէր Թոշակարկղը (§ 21, ծան. 2)։

§ 35. Մասնագինը պէտք է վճարեն իրանք մասնակիցները, համաձայն այս կանոնադրութեան § 13-ին։

§ 36. Մասնակիցների դիւրութեան համար՝ մասնագինը ազատւում է տոկոսներից։

§ 37. Մասնագինը վճարւում է կանխիկ, այս կանոնադրութեան հաստատուելու տարին, կամ 10 տարուայ ընթացքում, տարեկան $^{1}/_{10}$ մասը, համաձայն մասնակցի ընտրութեան։

§ 38. Մասնագինը 10 տարուայ ընթացքում վճարելիս՝ չվճարած մասի համար մասնակիցը վճարում է տարեկան $4\%$։



## ԹՈՇԱԿԱՐԿՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

§ 39. Թոշակարկղը կառավարւում է յատուկ Մասնաժողովի ձեռքով, բաղկացած 5 անդամից, որոնցից երեքին ընտրում է Հոգաբարձութիւնը, իսկ երկուսին՝ մասնակիցների ժողովը։

§ 40. Մասնաժողովն ունի նախագահ, գանձապահ, հաշուապահ և քարտուղար։ Նախագահի պաշտօնը վերապահւում է անդամներից մէկին, որին ընտրում է Հոգաբարձութիւնը, իսկ միւս պաշտօնները Մասնաժողովը յանձնում է ըստ իւր հայեցողութեան։ Բոլոր այս պաշտօնները կատարւում են առանց վարձատրութեան։

§ 41. Մասնաժողովի անդամներն ընտրւում են մի տարով և վերընտրելի են։

§ 42. Մասնաժողովի պարտաւորութիւններն են—

ա) Պահել ցուցակ իւրաքանչիւր մասնակցի, նշանակելով նրա տարիքը, դպրոց մտնելու տարին, ընտանեկան դրութիւնը, կնոջ, երեխաների, ծնողների տարիքը, տարեկան ռոճկի քանակութիւնը, իւրաքանչիւր տարուայ խնայողութիւնը և այլն։

բ) Պահել հաշիւ Թոշակարկղի դրամական միջոցների։

գ) Ստանալ և վճարել գումարներ՝ այս կանոնադրութեան հիման վրայ։

դ) Շահեցնել Թոշակարկղի գումարները ապահով եղանակով (§ 9), Հոգաբարձութեան նախընթաց համաձայնութեամբ։

ե) Քննել և որոշումներ կայացնել որևէ առաջար-

կութեան կամ գանգատի մասին, որ կարող են ծագել մասնակիցների կողմից՝ այս կանոնադրութեան գործադրութեան առիթով։

գ) Կազմել տարեկան հաշիւ Թոշակարկղի դրամական միջոցների և ծախսերի մասին։

է) Կազմել տարեկան նախահաշիւ՝ սպասուելիք մուտքի և ելքի մասին։

Ծան. Հաշուէտարին համարւում է սեպտեմբերից սեպտեմբեր։

ը) Ներկայացնել Հոգաբարձական ընդհանուր խորհրդին իւր որոշումներն (ե), հաշիւներն ու նախահաշիւները քննութեան և հաստատութեան։ Այս հաշիւներն Հոգաբարձութիւնից քննուելուց և հաստատուելուց յետոյ ամեն տարի զեկուցւում են բարձրագոյն Հոգևոր իշխանութեան ի տեղեկութիւն, և տարեկան ակտի ժամանակ ծանուցանւում են ի գիտութիւն մասնակիցների և հասարակութեան։

թ) Ներկայացնել Հոգաբարձութեան առաջարկութիւններ՝ Կանոնադրութեան այս կամ այն կէտը վերաքննելու մասին։

ժ) Հրաւիրել բժշկական խորհուրդներ՝ մասնակց հիւանդութեան դրութիւնը որոշելու համար (§ 28, ծան.)

§ 43. Հոգաբարձական ընդհանուր խորհրդին վե րապահուած են—

ա) Քննել Մասնաժողովի ներկայացրած որոշում ները, առաջարկութիւնները, հաշիւներն ու նախահա շիւները և նրանց մասին որոշում կայացնել։

բ) Քննել Մասնակիցների առաջարկութիւնները որոնք տրուած են Մասնաժողովին՝ 15 մասնակիցներ ստորագրութեամբ։

§ 44. Հոգաբարձութեան վճիռները, Թոշակարկղի վերաբերեալ ընթացիկ գործերում, վերջնական են։



§ 45. Հոգաբարձութիւնը իրաւունք ունի, հարաւոր համարուած ժամանակ, նշանակել վերաստուգող անձնաժողովներ՝ Թոշակարկղի դրամական դրութիւնը գործավարութեան եղանակն ստուգելու համար։

§ 46. Եթէ Հոգաբարձութիւնից և մասնակիցներից անկախ պատճառներով հարկ լինի Թոշակարկղը ակել՝ այս դէպքում կհրաւիրուի խառն ժողով Հոգաարձութեան և մասնակիցների, Թոշակարկղի ազատ րամական միջոցները գործադրելու եղանակը որոշելու ամար։ Այս ժողովում մասնակիցները կունենան խորրդակցական ձայն, իսկ որոշումները կայացնում է Հոաբարձութիւնը իւր ձայների 2/3 մեծամասնութեամբ։

§ 47. Այս Կանոնադրութիւնը, ինչպէս և որևէ ոփոխութիւն, որ ապագային հարկաւոր լինի մտցնել րա մէջ՝ պէտք է նախապէս Հոգաբարձութեան կողմից առաջարկուին բարձրագոյն Հոգևոր իշխանութեան ի աստատութիւն։

(Սոյն Կանոնադրութեան Յօդ. 1. ծանօթութիւնը լրացրած է եւ ոդ. 39 փոփոխուած է՝ համաձայն դպրոցի Հոգաբարձութեան յաւցած միջնորդութեան, որ հաստատուած է Վեհափառ Կաթողիկոսի ակագրութեամբ 1907 թ. յուլիսի 11-ին, թ. 1166)։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0231901

52.100